

**ՏԱՂ ԳԱՐՆԱՆ ԱԶՆԻՎ Է**

Ահա եղև պայծառ գարուն,  
Հոտըն բուրեաց անուշ վարդուն,  
Ձայնըն քաղցրիկ գայր պլպուլուն,  
Եւ եղանակըն հաւերուն:

Ծաղկանց դաշտերըն գունըզգուն,  
Սըփռին տերևքըն ծառերուն,  
Յորդորեցան ջուրք գետերուն,  
Լողան ձրկունք ի մէջ ծովուն:

Տերև սըփռին առաւօտուն,  
Յօղն ի վերայ իջեալ յամպոյն,  
Նա ես պլլպուլն ի քո սիրուն  
Եմ քան զալիդ ի մէջ ծովուն:

Պլլպուլ նըստեալ վերայ վարդին,  
Եղանակէր նա քաղցրագուն՝  
Առաւօտէ մինչ իրիկուն.  
Խն էր եղել վասըն հոտուն:

Աղաղակէր պլլպուլն ի վարդն.  
- Առանց քեզ յո՞նց ելնում ի հուն.  
Հանց քաղեցիր զշունչս ու հոգիս՝  
Այլ չի մնաց երեսս գուն:

Հանց ողորմուկ ի վարդն ասաց.  
- Իմ լուսատու արևըն դու,  
Աստղըն զօհալ և մուշտարի,  
Շամս ու դամարի իմ թաճըս դու:

Տպագիտն և շափիւղայ,  
Ակըն սուտակ և շիկագուն,  
Դու ես քաղաք Չինումաչին,  
Մարդիկ ի քեզ յուշ կու մըտնուն:

Եկայք մանկունք ի պաղչանին,  
Ծաղկունքըն ի մէջ վըրբան զարնունք,  
Ղումրին երգէ մեզ եղանակ՝  
Թ'այսօր եղև պայծառ գարուն:

Այսօր մարդիկ ուրախանան,  
Որտեղ ընկեր ունին սիրուն,  
Նոքա ի սեր մեր ժողովին,  
Քաղցրիկ խըմեն յանուշ գինուն:

Չինարըն ու նունուֆարըն,  
Նարգիզ ծաղիկըն խայտագոյն,  
Մուրտըն, շուշան ու բրաբիոն  
Եւ ըռահանն խիստ սիրուն:

Ծաղկունք սրփոին հարիւր հազար,  
Կանաչ, կարմիր և գունըզգուն,  
Թըռչունք ի յողըս վերանան.  
Որինեն զաստուածն ամենեցուն:

## ԱՅՍՕՐ ԵՂԵՒ ՊԱՅԾԱՌ ԳԱՐՈՒՆ, ՑՆԾԱՆ ԾԱՂԿՈՒՆՔ ԵՒ ՅՈՐՊՈՐԻՆ

Այսօր եղև պայծառ գարուն, ցնծան ծաղկունք և յորպորին.  
Հագնին ցեղս ի ցեղաց՝ մանդրուն հաւերն ի հաւ խօսին.  
Ի վերայ լերանց բարձրանց գոյնըզգոյնով ծաղկունք սփոին,  
Ծածկեն զերեսս երկրի, ըզլենն ըզդաշտ ու զբաղչանին:  
Են գեղեցիկ փետուր հագել՝ փոքրիկ հաւերն ի ծաղկոցնին,  
Ու հազար դասս դասով՝ քաղցրաձայնեն զանլըռելին.  
Հարբել են յանուշ հոտոյն, ու նստել են ի վերայ ծաղկին,  
Զի ի սիրու են ստեղծած՝ սեր կա յիրենք՝ որ կու խօսին: